Ուժի մեջ է 2019թ. փետրվարի 1-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան

_____

18 հունվարի 2019թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունում (այսուհետ՝ Բանկ) թղթակցային հաշիվների բացման, վարման և փակման դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):
2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:
3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում տեղադրելով:
4. Թղթակից բանկի կողմից որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի կամ պայմանագրի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:
5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և թղթակից բանկի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի այլ սակագներով:
6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով թղթակից բանկի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:
7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել թղթակից բանկի հաշվից, եթե այլ բան սահմանված չէ թղթակից բանկի հետ կնքված պայմանագրով:
8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:
9. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում և մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ է ընդունում գործառնական/աշխատանքային օրվա ընթացքում: Գործառնական/աշխատանքային օրը Բանկի մասնաճյուղերի համար սահմանվում է Երևանի ժամանակով ժամը 9:30-ից-16:30-ը, իսկ հեռահար սպասարկման, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) համար՝ 9:00-ից 18:00-ն, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում կամ այլ ներքին իրավական ակտերում:
10. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

1. Թղթակցային հաշվի բացում, վարում, փակում	անվճար
2. Թղթակցային հաշվի քաղվածքի և վճարային փաստաթղթերի տրամադրում	անվճար
3. Հաշվի նվազագույն մնացորդ	
- ՀՀ դրամ	1,000,000 ՀՀ դրամ
- ՌԴ ռուբլի	100 000 ՌԴ ռուբլի
- ԱՄՆ դոլար	3,000 ԱՄՆ դոլար
- եվրո	3 000 եվրո
4. Հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
5. Աուդիտորական հարցումներ	
- ռեզիդենտ բանկերին	անվճար
- ոչ ռեզիդենտ բանկերին	5 000 ՀՀ դրամ

Ն. Հովհաննիսյան	Ն. Նազարյան	Ս. Զաքինյան	Ա. Մելքոնյան	Գ. Դարբինյան
Ռ. Սարգսյան	Տ. Սիմոնյան	Ի. Ապկարյան	Ս. Իրիցյան	Լ. Գևորգյան
Զ. Սարգսյան	Հ. Հակոբյան	Մ. Ամիրխանյան	Է. Հայրապետյան	Ա. Սարգսյան